

Հայաստան-Սփյուռք համահայկական համաժողով, 2011 թ.

Չարգելի տիկնայք և պարոնայք

Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության անունից երախտագիտությունս եմ հայտնում Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, համահայկական ներկայացուցչական նման համաժողովի կազմակերպման համար և մասնակիցներին ցանկանում եմ արդյունավետ աշխատանք:

Մեր համաժողովն անցնում է հայ ժողովրդի պատմության նշանակալից իրադարձության նախօրեին: Ինչպես պատկերավոր կերպով նշել է Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, «Քսան տարի առաջ Հայաստանը հռչակեց իր անկախությունը՝ հասնելով բազում դարերի ու սերունդների երազանքի իրականացմանը և վերստին միանալով ինքնիշխան պետությունների հանրությանը»:

Մենք շնորհավորում ենք Հայաստանի ժողովրդին և աշխարհի բոլոր հայերին Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հորեյանի առնչությամբ: Բոլորիս մաղթում ենք խաղաղություն, բարգավաճում ու նոր հաղթանակներ:

Հայաստանի անկախությունը, ազատությունը և զարգացումը համազգային արժեք են աշխարհի բոլոր հայերի համար: Մենք ասում ենք, որ «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է»: Հետևաբար Հայրենիքում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ յուրաքանչյուր սփյուռքահայ, գալով Հայաստան, իրեն զգա ինչպես իր տանը: Ժողովրդավարության զարգացումը, օրենքի իշխանության կայացումը Հայաստանի Հանրապետությունը ավելի գրավիչ կդարձնեն Սփյուռքի համար: Միաժամանակ անհրաժեշտ է լինել հայրենիքում, տեղում զգալ ոգին, խնդիրները, դժվարությունները, անձամբ մասնակցել դրանց լուծմանն ու հաղթահարմանը: Իրական հայրենասիրությունը հեռակա չի լինում: Ես առաջարկում եմ նորովի

ձևակերպել կարգախոսը և բարձրաձայնել «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է, Հայաստանի հոգսերը բոլորինս են»:

Ինչպես և բոլոր երկրներում ձեռքբերումների հետ միաժամանակ Հայաստանում առկա են նաև բազմաթիվ խնդիրներ. գործազրկություն, արտագաղթ, շրջափակում, քաղաքային և գյուղական բնակավայրերի անհավասար զարգացում: Ուստի, մենք բոլորս միասին պետք է աշխատենք այդ դժվարությունները հաղթահարելու համար, քանզի մենք ունենք ամենակարևորը՝ Հայաստանի անկախ հանրապետությունը:

Ժամանակը նոր պահանջներ է առաջադրում: Ներկայումս հայ ազգի արդյունավետ և գլոբալ գործունեության համար անհրաժեշտ է ձևավորել ժամանակակից ազգային-պետական մտածելակերպ: Մեր համազգային նպատակներին հասնելու համար պետք է միաժամանակ և՛ պահպանենք մեր արժեքները, և՛ կարողանանք անընդատ փոխվել: Այսինքն արդիականացնենք մեր գործելակերպը և մտածելակերպը: Անհրաժեշտ է արագացնել որոշումների ընդունման և իրականացման գործընթացը, անընդատ բարձրացնել հայրենիքի և Սփյուռքի համատեղ գործունեության արդյունավետությունը:

Այս տեսանկյունից վերջին տարիներին կան հսկայական ձեռքբերումներ: Դրանք պայմանավորված են նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ձևավորեց Սփյուռքի նախարարություն, որն իր գոյության երեք տարիների ընթացքում անցել է տասնամյա գործունեության համարժեք ճանապարհ և այսօր ի շնորհիվ նաև նախարար Հրանուշ Հակոբյանի եռանդուն աշխատանքի մեծ հեղինակություն է վայելում Սփյուռքում:

Մեր գործունեության հետագա զարգացումը պահանջում է ձևավորել Հայաստանի և Սփյուռքի համագործակցության ժամանակակից համակարգ, նոր մեխանիզմներ: Շատ կարևոր է լիակատար օգտագործել մեր բոլորի՝ հնարավորությունները, միջազգային հարաբերություններում հայկական ինքնուրույն գործոնի ամրապնդման համար: Խիստ անհրաժեշտ է

բարձրացնել աշխարհում մեր ազգային մրցունակությունը: Մենք պետք է այնպես արդյունավետ միավորենք մեր ուժերը, որ դրանք ոչ թե գումարվեն, այլ բազմապատկվեն:

Մենք կարևորում ենք Հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակությունը մեր հավատի պահպանության, եկեղեցու և ժողովրդի միասնության ապահովման, մեր առօրյա կյանքը քրիստոնեական արժեքներին համապատասխան կազմակերպելու և հայապահպանության գործում: Եվ ցանկալի կլիներ Հայ Առաքելական Եկեղեցին տեսնել միավորված:

Այժմ մի շարք առաջարկություններ հետագա գործունեության բարելավման վերաբերյալ:

1. Մեզ անհրաժեշտ է ստեղծել համագործակցության մի այնպիսի մեխանիզմ, որը հնարավորություն ստեղծի համազգային խնդիրները քննարկել համատեղ և ընդունել արդյունավետ որոշումներ: Այդ խնդիրը կարելի է լուծել Համազգային Խորհրդի ձևավորման միջոցով: Խորհուրդը կգործի որպես կոլեգիալ մարմին իր մեջ ներառելով թե՛ Սփյուռքի, թե՛ Հայաստանի և թե՛ Արցախի ներկայացուցիչներին: Խորհրդի գործունեությունը թույլ կտա աշխարհում ավելի արդյունավետ պաշտպանել մեր ազգային շահերը, համակարգել Սփյուռքի լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը: Անհրաժեշտ է նաև մշակել Սփյուռքի անվտանգության և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ռազմավարական զարգացման հայեցակարգ: Առաջարկում ենք նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում ընդլայնել Սփյուռքին վերաբերող հատվածը:

2. Տնտեսական ոլորտում առաջարկում ենք ձևավորել պարբերաբար գործող տնտեսական համահայկական ֆորում, որի մասնակիցները կարող են լինել և հայ, և այլազգի գործարարները: Առաջարկում ենք, որպեսզի Տնտեսական համահայկական ֆորումի նախագահ հանդիսանա Հայաստանի Հանրապետության Նախագահը: Համաշխարհային հայկական կոնգրեսը պատրաստ է Հայաստանի Հանրապետության կառավարության հետ համատեղ հանդես գալ որպես կազմակերպիչ: Ֆորումի շրջանակներում Երևանում կարելի է ստեղծել նպատակային ծրագրերի և բիզնես նախագծերի կենտրոն՝ Սփյուռքի գործարարների և մասնագետների մասնակցությամբ:

3. Ինֆորմացիոն դաշտում գոյություն ունեցող մրցակցությունը և պայքարը պարտավորեցնում են մեզ ձևավորել համահայկական տեղեկատվական կենտրոն և նախաձեռնել «Վիրտուալ Հայք» ծրագրի իրականացումը:

4. Մեր ապագան և մեր համազգային նպատակների իրականացումը պայմանավորված է Երիտասարդության նկատմամբ մեր վերաբերմունքով: Ուստի առաջարկում ենք
 - Հայաստանի Հանրապետությունում ընդունել օրենք Երիտասարդության մասին և օրենքով ամրագրել Երիտասարդության օրը
 - ձևավորել համահայկական Երիտասարդական կազմակերպությունների միություն

- Հայաստանում և արտերկրում պարբերաբար կազմակերպել երիտասարդական ֆորումներ և համահայկական փառատոններ հայ և այլազգի երիտասարդների մասնակցությամբ:

Համաժողովի հարգելի մասնակիցներ:

Մեր բոլոր առաջարկությունները առավել մանրամասն մենք կներկայացնենք թեմատիկ քննարկումների ընթացքում:

Թանկագին բարեկամներ: Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյա հոբելյանի առնչությամբ: Կոչ եմ անում աշխարհի հայերին այդ օրը սեպտեմբերի 21-ին գալ Հայաստան, անցկացնել մի քանի օր, էլ ավելի կապվել հայրենիքին, ինչու չէ՞ նաև հանգստանալ:

Ավարտին ևս մեկ անգամ երախտագիտության խոսքեր եմ ուզում ասել Հայաստանի Նախագահ պարոն Սերժ Սարգսյանին և այս համաժողովի կազմակերպիչներին: Բոլորիս մաղթում եմ առողջություն, համբերություն և նոր հաջողություններ ի բարօրություն Հայաստանի, Արցախի և Սփյուռքի եռմիասնության:

Շնորհակալություն ուշադրության համար